



ԱԿՑԻԱ

«Panasonic-ը տոնում է իր 100-րդ տարեդարձը»

ՊԱՅՄԱՆՆԵՐ

02 Նոյեմբեր, 2018թ.

1. Ակցիայի անվանումը՝ «Panasonic-ը տոնում է իր 100-րդ տարեդարձը» (այսուհետ՝ «Ակցիա»)
2. Ակցիայի կազմակերպիչ՝ «Զիզգագ» ՍՊԸ (այսուհետ՝ «ԶԻԳԶԱԳ»)
3. Ակցիայի սկիզբը՝ 03.11.2018թ., ավարտը՝ 30.11.2018թ., ժամը 22:00-ին
4. Ակցիայի անցկացման վայրը՝ ԶԻԳԶԱԳԻ վաճառատարահները, բացառությամբ՝ «Զիզգագ Անտենա» ցանցի
5. Ակցիայի մասնակիցները՝ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ «Հաճախորդ»)
6. Ակցիայի նպատակը՝ Panasonic-ի 100-րդ տարեկիցի կապակցությամբ Զիզգագում մեկնարկում է գովազդային վիճակախաղ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՇԱՀՈՒՄՈՎ տոնական խաղարկություն, որի ընթացքում հաճախորդները, գնելով Panasonic ապրանքանիշի տեխնիկա, կստանան 10-50% Ձեղչի կտրոն շահելու հնարավորություն:
7. Ակցիային մասնակցող ապրանքները. Ակցիայի շրջանակներում 5000 դրամ և ավել արժողությամբ միայն Panasonic ապրանքանիշի ցանկացած ապրանքի գնման դեպքում Հաճախորդը կարող է պատահականության սկզբունքով ընտրել մեկ Ձեղչի կտրոն: Ակցիային մասնակցող երկու և ավելի ապրանք միաժամանակ գնելու դեպքում գործում է կտրոնները բացելու և զեղչեր շահելու հետևյալ կարգը
 - առաջին բացված կտրոնի շահած զեղչը տրվում է ամենաբարձր արժեքով գնված ապրանքի դիմաց,
 - երկրորդ բացված կտրոնի շահած զեղչը տրվում է արժեքով երկրորդ ամենաբարձր գնված ապրանքի դիմաց,
 - յուրաքանչյուր հաջորդ բացված կտրոնի շահած զեղչը տրվում է գնվող ապրանքների արժեքների նվազման հաջորդականությանը համապատասխան,
 - յուրաքանչյուր զեղչի կտրոն գործում է միայն մեկ անգամ, զեղչը կիրառվում է անմիջապես կտրոնը բացելու պահին, որից հետո կտրոնը հանձնվում է գանձապահին:
8. Ակցիան չի գործում «Վերջին նմուշ» գնալիտակներով և հատուկ առաջարկով ներկայացված Panasonic ապրանքների գնման դեպքում:
9. Պարտադիր շահումով կտրոնները ներառում են 10%, 15%, 25%, 35% և 50% զեղչեր:
10. Ձեղչի կտրոնում նշված 10%, 15%, 25%, 35% և 50% զեղչի շահումը հնարավորություն է տալիս Հաճախորդին կտրոնը բացելու պահին վճարել ձեռք բերվող ապրանքի համար կտրոնում նշված զեղչի չափով պակաս: Ձեղչը կկիրառվի կոնկրետ ապրանքի համար՝ կտրոնները բացելու հերթականության սկզբունքի համաձայն՝ առաջին կտրոնը բացվում է Ակցիային մասնակցող ամենաբարձր արժեքով ապրանքի համար, յուրաքանչյուր հաջորդ կտրոնը՝ ըստ ապրանքների արժեքների նվազման:
11. Ակցիայի շրջանակներում ընդունվում են կանխիկ կամ կրեդիտ քարտով վճարման եղանակներ:
12. Ակցիայի շրջանակներում չեն գործում Զիզգագ Ակումբի բոնուսային քարտին կուտակումները:
13. Ակցիայի պայմաններով գնումները կարող են ձևակերպվել նաև ապառիկի հետևյալ տեսակներով՝
 - «Ինտեկոբանկ» ՓԲԸ վարկավորմամբ «Մտանդարտ» ապառիկ
 - «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ վարկավորմամբ ապառիկ
 - «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ վարկավորմամբ ապառիկ
 - «Ամերիաբանկ» ՓԲԸ վարկավորմամբ ապառիկ
 - «Արցախբանկ» ՓԲԸ վարկավորմամբ ապառիկ
 - «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ վարկավորմամբ ապառիկ
14. Մույն պայմանները չեն գործում «Ինտեկոբանկ» ՓԲԸ վարկավորմամբ արտոնյալ պայմանների՝ «6 ամիս առանց տոկոս» ապառիկի դեպքում:
15. Ակցիայի գործողության ընթացքում Ակցիայի պայմանները կարող են փոփոխել և լրացվել:
16. Ակցիայի պայմանների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումները և մեկնաբանությունները ԶԻԳԶԱԳԻ անունից կարող է կատարել ԶԻԳԶԱԳԻ տնօրինությունը:
17. Ակցիայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել ԶԻԳԶԱԳԻ վաճառատարահներ կամ զանգահարել՝
 - Երևան, Չարենցի 24, հեռ.՝ (010) 570209, աշխ. ժամեր՝ 10:00-20:00, կիրակի՝ 10:00-19:00
 - Երևան, Մաշտոցի 24, հեռ.՝ (010) 537675, աշխ. ժամեր՝ 10:00-20:00, կիրակի՝ 10:00-19:00
 - Երևան, Մայաթ-Նովա 20, հեռ.՝ (010) 542757, աշխ. ժամեր՝ 10:00-20:00, կիրակի՝ 10:00-19:00
 - Երևան, «Դավա Գարդեն Մոլ», «Զիզգագ Մեգաթոր» հեռ.՝ (060) 461010, աշխ. ժամեր՝ 10:00-22:00
 - Երևան, Արշակունյաց պող. 34/3, «Երևան Մոլ», «Զիզգագ Մեգաթոր» հեռ.՝ (060) 441060, աշխ. ժամեր՝ 10:00-22:00